Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/24294/02/23
2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«08» փետրվարի 2024թ. ք. Երևան

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործով ըստ Եկատերինա Գոլդոբինայի դիմումի՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և այն կատարման թույլատրելու պահանջի մասին, Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մանուչարյանի կողմից 23.01.2024 թվականին կայացված «Քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու վերաբերյալ» որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Եկատերինա Գոլդոբինան դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ պահանջելով ճանաչել Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդսկի մարզի Արբիտրաժային դատարանի կողմից թիվ A43-31518/2021 գործով 21.06.2022 թվականին կայացրած որոշումը և թույլատրել դրա կատարումը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 24.08.2023 թվականի որոշմամբ Եկատերինա Գոլդոբինայի դիմումը

վերադարձվել է՝ գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02.11.2023 թվականի որոշմամբ Եկատերինա Գոլդոբինայի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի «Դիմումը վերադարձնելու մասին» 24.08.2023 թվականի որոշումը վերացվել է:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.11.2023 թվականի որոշմամբ Եկատերինա Գոլդոբինայի դիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանը, պատճառաբանելով, որ

- «*ինչպես բխում է ներկայացված դիմումից՝ դիմում ներկայացնող Եկատերինա Գեննադիևնա Գոլդոբինայի և պարտապան Ստյոպա Ջանիկի Հովհաննիսյանի բնակության վայրի հասցեները գտվնում են Ռուսաստանի Դաշնությունում, ուստի սույն դեպքում կիրառելի չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը*»,

- «*դիմումին կից ներկայացվել է ՀՀ կադաստրի կոմիտեի 23.02.2023 թվականի թիվ ԱՏ-23022023-99-0262 տեղեկանքը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի Ստեփան Ջանիկի Հովհաննիսյանի /ծնված՝ 24.02.1974թ./ անվամբ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ գյուղ 05-085-0138-0017 կադաստրային ծածկագրով առանձնատան և տնամերձ հողամասի, Վարդենիկ գյուղ 05-085-0389-0014, 05-085-0396-0099 և 05-085-0304-0390 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք (կադաստրային գործերում քաղաքացու անունը՝ Ստյոպա)*»,

- «*Ստյոպա Ջանիկի Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետությունում բնակության վայր չունի և վերջինիս պատկանող գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում*»,

- «*սույն գործով ներկայացված դիմումն իրավասու է քննել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, հետևաբար հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով Դատարանը պարտավոր է նույն օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով դիմումը հանձնել իրավասու դատարանին*»,

30.11.2023 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին:

Վերը նշված գործն ստացվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում և բաշխվել նույն դատարանի դատավոր Մ. Մանուչարյանին:

Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Մանուչարյանը, համաձայն չլինելով գործի տարածքային ընդդատությանը, և գտնելով, որ «սույն քաղաքացիական գործի ընդդատության հարցը լուծելու նպատակով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով պետք է սույն քաղաքացիական գործն ուղարկել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ***<u>այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան փոխանցելու իրավական ընթացակարգն ապահովելու նպատակով</u>***»,

23.01.2024 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին այն պատճառաբանությամբ, որ՝

- «*սույն դիմումի նկատմամբ կիրառելի է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 8-րդ մասը և Առևտրային արբիտրաժի մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը հետևաբար այն ենթակա է քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից*»:

Թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործը ՀՀ վճռաբեկ դատարանում ստացվել է 02.02.2024 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, լուծելով թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության մասին վեճը, գտնում եմ, որ նշված քաղաքացիական գործով իրավասու դատարանը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն է՝ հետևյալ պատճառաբանությամբ: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 346-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերը ճանաչվում են, իսկ կատարում պահանջող դատական

ակտերը նաև կատարվում են Հայաստանի Հանրապետությունում, եթե այդպիսի ճանաչումը և կատարումը նախատեսված են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ փոխադարձության հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն ենթաբաժնի [ենթաբաժին յոթերորդ] իմաստով՝ օտարերկրյա դատական ակտ է համարվում այլ պետության դատական մարմնի ընդունած եզրափակիչ դատական ակտը՝ անկախ դրա անվանումից, որն ունի իրավական ուժ այն պետությունում, որտեղ կայացվել է, այդ թվում՝ օտարերկրյա դատարանի հաստատած հաշտության համաձայնությունները, արձակած դատական հրամանները և վճարման կարգադրությունները, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով քրեական վարույթով կայացրած դատավճիռները:

Սույն գործի նյութերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ Եկատերինա Գոլդոբինայի կողմից ներկայացված դիմումը ենթակա է քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի յոթերորդ ենթաբաժնում ներառված 52-րդ գլխով նախատեսված վարույթի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ տվյալ դեպքում եզրափակիչ դատական ակտն ընդունվել է այլ պետության՝ Ռուսաստանի Դաշնության դատական մարմնի կողմից՝ անկախ այդ մարմնի անվանումից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում ներառված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 347-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով վարույթներն իրականացվում են նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են նույն ենթաբաժնի դրույթներով:

Տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի յոթերորդ ենթաբաժնի դրույթներով, ի տարբերություն նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների, սահմանված են օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի ընդդատության վերաբերյալ հատուկ կանոններ: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է պարտապանի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պարտապանը Հայաստանի Հանրապետությունում բնակության (գտնվելու) վայր չունի, կամ նրա բնակության (գտնվելու) վայրն անհայտ է, դիմումը ներկայացվում է պարտապանին պատկանող գույքի գտնվելու վայրի դատարան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե օտարերկրյա դատական ակտն իր բնույթով չի ենթադրում հարկադիր կատարում որևէ մեկ պարտապանի նկատմամբ կամ ընդհանրապես հարկադիր կատարում չի պահանջում, ապա այդպիսի ակտը ճանաչելու և

կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է այն ներկայացնող անձի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ոչ իրավասու դատարան, ապա վերջինս պարտավոր է նույն օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով այն հանձնել իրավասու դատարանին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին կայացվում է որոշում:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ ի տարբերություն վերը նշված օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումներով գործերի ընդդատության վերաբերյալ սահմանված են հատուկ կանոններ, որոնց համաձայն՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու ու կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը որպես կանոն ներկայացվում է պարտապանի բնակության (գտնվելու) վայրի դատարան, իսկ եթե պարտապանը Հայաստանի Հանրապետությունում բնակության (գտնվելու) վայր չունի, կամ նրա բնակության (գտնվելու) վայրն անհայտ է, ապա դիմումը ներկայացվում է պարտապանին պատկանող գույքի գտնվելու վայրի դատարան: Նշված կանոնից բացառություն է կազմում այն դեպքը, երբ օտարերկրյա դատական ակտն իր բնույթով չի ենթադրում հարկադիր կատարում որևէ մեկ պարտապանի նկատմամբ կամ ընդհանրապես հարկադիր կատարում չի պահանջում, որի դեպքում այդպիսի ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է այն ներկայացնող անձի բնակության (գտնվելու) վայրի դատարան:

Դրա հետ մեկտեղ օրենսդիրը, չբացառելով այն դեպքը, երբ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումը կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ոչ իրավասու դատարան, սահմանել է, որ այդ դեպքում վերջինս պարտավոր է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածով սահմանված վերը նշված կարգով այն հանձնել իրավասու դատարանին: Ընդ որում, գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին դատարանը կայացնում է որոշում:

Սույն գործում առկա նյութերի համաձայն՝ պարտապան Ստյոպա Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետությունում բնակության վայր չունի, որի պայմաններում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, դիմումը պետք է ներկայացվեր վերջինիս պատկանող գույքի գտնվելու վայրի դատարան: Նկատի ունենալով այն, որ համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից 23.02.2023 թվականին տրված «Գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ» տեղեկանքի՝ պարտապան Ստյոպա Հովհաննիսյանին պատկանող թվով չորս անշարժ գույքը գտնվում են Գեղարքունիքի մարզում, ուստի վերջինիս պատկանող գույքի գտնվելու վայրի դատարանն է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործով իրավասու դատարանը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն է, որի պայմաններում գործն ընդդատյա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Միաժամանակ նպատակ ունենալով ապագայում բացառելու ընդդատության մասին վեճը լուծելու համար գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին որոշումներ կայացնելիս նաև ստորև նշված «պատճառաբանության» օգտագործումը՝ անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ ինչպես «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքից, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից չի բխում Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի կողմից 23.01.2024 թվականին կայացված «Քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու վերաբերյալ» որոշման մեջ օգտագործված ձևակերպումն այն մասին, որ «գործն ուղարկվում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին <u>այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան փոխանցելու իրավական ընթացակարգն ապահովելու նպատակով</u>»:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործն ընդդատյա է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:
2. Սույն որոշումը և թիվ ԵԴ2/24294/02/23 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:
3. Որոշման օրինակն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**